ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«23» հունիսի, 2014թ. N/- 397

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով ընթացակարգի
գրանցված մասնակիցներին

Հարգելի պարոն/տիկին,

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր կազմակերպության միջև կնքած N ՇՀԱՊՁԲ-11/21 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Թաիրովի 15 հասցեով, N 315 սենյակ, Ա. Ավետիսյանին, մինչև 2014 թ. հուլիսի 3–ը, ժամը 15:00-ն:

Հայտերը կբացվեն «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի վարչական շենքում, ք. Երևան, Թաիրովի 15 հասցեով, N 311 սենյակում, 2014 թ. հուլիսի 3–ին, ժամը 15:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/21 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0082, Թաիրովի 15, հեռ/ֆաքս 58-74-27,
էլ. փոստ՝ hushardzan@yahoo.com, www.hushardzan.am

պատվիրատուին ներկայացնի այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և/կամ/ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7/-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցումով/՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

Տնօրեն՝ Վլ. Պողոսյան

Կատ. Ա. Ավետիսյան

Հեռ 58-74-25

**Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0082, Թաիրովի 15, հեռ/ֆաքս 58-74-27,**

**էլ. փոստ՝ hushardzan@yahoo.com, www.hushardzan.am**